

նեն իբրև «Փռանկ և լրտես», իրեն դէմ վճիռ մը կը հանեն, և զինք մահապարտներու բանար նետել կու տան (3 Յուլիս 1658):

«Եւ այսու ոչ շատացեալ, կ'ըսէ Երեմիա Չելեպի, հարեալք ի դիւէ՝ խորհին սպանանել զնա իշխանք քաղաքիս, յոյս ունելով զգրամ Երուսաղէմին, որ կայր ի մօտս իւրեանց, զոր յղեալ էր Եղիազար վարդապետն, եթէ հոգսսցեն զբան Երուսաղէմայ»: Եղիազար՝ իմանալով եղելութիւնը, կը դատապարտէ անոնց ծրագիրը: Սակայն տեղապահները կը յամառին իրենց ընթացքին մէջ, կը համբաւեն՝ թէ «Թու՛մա հակառակեցաւ Երուսաղէմայ և զԵրուսաղէմ հարկատու արար»: Եւ ամէն տեսակ մեքենայութիւններ, խարէութիւններ և բռնութիւններ ի գործ կը դնեն, իրենց համախոհները բազմացնելու համար: Երեմիա Չելեպի կը նկարագրէ այս աշխարհական տեղապահներուն և անոնց գործակիցներուն անօրէնութիւնները, և դառնօրէն կ'աւաղէ անոնց գործած աւերներուն վրայ: Եւ կը յարէ՝ թէ ասոնցմէ 24 հոգի «սատանայի մարգարէք... մտին ի հանդէս չարութեան... և հանապազ երթային, գային ի տիւանն, և ի ծածուկս հաճեցեալ զկամս փաշային, ասեն. մեք տացուք ըզքըսան քսակ (9) պոստանճոց և քեզ ևս

(9) Քսակը 500 դահեկան էր: